ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

ՈՐԳԱՆ Ա. Կ. (Բ.) Կ Ի. Լ. Դ. ՄԵՐՁԿՈՄԻ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԵՎ ՄԱՐԶԳՈՐԾԿՈՄԻ

№ 115 (1774) | 22 ՄԱՅԻՍԻ 1936 Թ. ՈՒՐԲԱԹ | ԳԻՆԸ 5 Կ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՆԱՎԱՀԱՆԳՍՏՈՒՄ ԲՌՆՎԱԾ «ՍՈՒՉԱՆ» ՇՈԳԵՆԱՎԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՀԱՅՐԵՆԻՔ

ՄՈՍԿՎԱ.— Վլադիվոստոկի նավահանգիստը վերադարձավ 2 տարի առաջ ճապոնական Այժրի նավահանգիստում բռնված «Սուչան» խորհրդային շոգենավը։ Այդ նավի պետը (ինչպես և նույն նավահանգիստում բռնված «Դվինսկ» խորհրդային շոգենավի պետը) անհիմն մեղադրվում էր տպորիի կերպով փակ նավահանգիստը մտնելու մեջ։

Հայրենիք վերադարձած «Սուչան» նավի անձնակազմը ջրային տրանսպորտի ժողկոմ ընկ. Գախովի անունով ուղարկած հեռագրի մեջ հայտնում է, թե ճապոնական նավահանգիստում գտնվելու յերկու ամսվա ընթացքում, չնայած ճապոնական իշխանությունների շատ փորձերին, խորհրդային նավաստիները վոչ մի պրովոկացիայի չենթարկվեցին։ «Սուչան»-ի բոլոր աշխատողները սկսած հրամանատարից մինչև մաքրողը—իրենց ցույց տվին, վորպես մեծ հայրենիքի արժանավոր զավակներ։

Նավաստիները խորհրդային կառավարությանը, հարգելի կուսակցությանը և սիրելի Ստալինին հայտնում են բոլշևիկյան շնորհակալություն՝ դեպի նրանց և նրանց ընտանիքները ցույց տված հոգատարության համար։ Անձնակազմը կցվում է 5-րդ համամիութենական ժրցման՝ լավագույն նավի ու նավահանգստի համար և պարտավորվում է աշխատել 1936 թ. առանց վթարների ու պարապուրդների, ոգտագործելով նավի լիակատար ուժն ու տարողությունը։

«Մենք խոստանում ենք մեր նավը դարձնել սատխանովական» ասված է հեռագրի մեջ։

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՍԱՆՁՈՒՐԻԱՅՈՒՄ

ՇԱՆՀԱՅ.— «Մարեյաս Թայմս» թերթը հաղորդում է, թե Մանջուրիայում պարտիզանական մի ջոկատ չինուհի Լիու Խուն-գուանի հրամանատարությամբ ապրիլի վերջերին աջող հարձակում է գործել Գուչեն քաղաքի վրա (Սուլֆին գետի վրա)։ Մանջուզոյի կայազորը թվով 1000 մարդ, շփոթվելով՝ անձնատուր են յեղել։ Նույն գիշերը ջոկատը գետափին մոտեցնելով գրավված թնդանոթները՝ ուղակոծեց մանջուրական յերկու ռազմանավ և յետ նահանջեց միայն բոլոր արկերը ծախսելուց հետո։

ՇԱՆՀԱՅ.— Վեց հարյուր հոգուց բաղկացած պարտիզանական մի ջոկատ աջողությամբ գրոհեց Մանջոու-գոյի զորքերի վրա Տանուլյան գավառում (Սանց գյանի նահանգ)։ Գրոհի ժամանակ սպանվել են ճապոնական 3 սպա։ Մի ժամ կռվելուց հետո պարտիզանները նահանջեցին, գրավելով մի քանի արկղ ռազմամթերքներ։

Մանջոու-գոյի առաջին զինվորական շրջանի շտաբի հրապարակած տվյալների համաձայն, այդ շրջանի ճապոնա-մանջուրական զորամասերը ապրիլին 37 պատժիչ արշավանք են կատարել ապստամբների դեմ, կորցնելով 35 սպանված և 15 վիրավոր։

4-րդ զինվորական շրջանի զորքերը ապստամբների դեմ անց են կացրել 27 պատժիչարշավանք՝ կորցնելով 8 սպանված և 72 վիրավոր։ Նույն շրջանի ժանդարմական կորպուսը ապստամբների հետ ունեցել է 38 մարտ։ Կորպուսը կորցրել է 5 սպանված և 20 վիրավոր։

ԿՈՎԵՐԻ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուլյա Թաղի կոլտնտեսությունում գտնվող աշխատակիցները տեղական կովերից չորսն առանձնացնելով՝ սկսել են նրանց նկատմամբ փորձեր կատարել։

Այստեղ տալիս ենք կատարած փորձի առաջին յոթանասնյակի արդյունքները։

Առանձնացված յուրաքանչյուր կովին որական տվել են 4 կիլոգրամ քունջութ և գարու արդով, 6 կիլոգրամ կոպիտ և 8 կիլոգրամ հյութալի կերեր։

Կովերին ասենք որ կերակրել են 3 անգամ և 4 ժամ դուրս են բերել արոտ։

Դիտել են որակն յերեք անգամ։

«Աղաղդ» կովը, վոր մինչև փորձնական կերակրումն որական 2,8 լիտր կաթ եր տալիս, այժմ տալիս և որական 7,5 լիտր, «Աղաղյուլ» կովը տալիս եր 2,3 լիտր կաթ, իսկ այժմ տալիս և որական 6,5 լիտր։

Իրենց կաթնատվությունը կրկնապատկել են նաև «Ճանիշակ» և «Գուչիկ» կովերը։

Փորձը շարունակվում է։

Ղեկ-տեխնիկ՝ Մ. ԴԱՐԻՆՅԱՆ

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԲԵՇՏԱՆՈՒՄ

ԻՏԱԼԻԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԳՆԵԼ ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ-ՋԻ ԲՈՒՏԻ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ԼՈՆԴՈՆ.— Զստուգված տեղեկությունների համաձայն, իտալացիները ձգտում են ձեռք բերել Ադիս Աբեբա-Ջիբուտի յերկաթուղին, ինչպես և Ջիբուտի նավահանգիստը՝ Ֆրանսիային փոխհատուցում տալու պայմանով։

Իտալական կառավարությունը ձգտում է գնել ըստ հնարավորության մեծ քանակությամբ Ադիս-Աբեբա Ջիբուտի յերկաթուղու բաժնետոմսերը։ Այդ նպատակով իտալացիները ուժեղ ճնշում են գործ դնում ֆրանսիական բաժնետերերի վրա։

ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԴԻՍ-ԱԲԵԲԱՅՈՒՄ

ԼՈՆԴՈՆ.— Անգլիական մամուլը հաղորդում է, թե մայիսի 5-ից, յերբ իտալական զորքերը գրավեցին Ադիս-Աբեբան, իտալական իշխանությունները Ադիս-Աբեբայում ձերբակալել են ավելի քան 1.500 մարդ։ Ադիս Աբեբայում գինվորական դատարանը կայացնում է մահվան մասսայական դատավճիռներ։ Դատապարտվածներին գնդակահարում են խմբերով՝ 40—50-ական հոգի։ Քաղաքը գրավելու հետևյալ որը իտալական զորահրամանատարությունը հրաման արձակեց, առաջարկելով բնակչությանը 3 որվա ընթացքում հանձնել բոլոր զենքերը, սպառնալով հակառակ դեպքում գործադրել մահապատիժ։ Մայիսի 9-ին սկսվեցին մասսայական ձերբակալություններ, չնայած բնակչության մեծամասնությունը վոչինչ չգիտեր նոր հրամանի մասին։

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՀԱԲԵՇՏԱՆՈՒՄ

ՀՌՈՄ.— Հասարակական աշխատանքների ֆինանսավորման իտալական ընկերության վարչությունը խորհուրդը 100 միլիոն լիրա յե հատկացրել իրրև Հաբեշստանում աշխատանքները ֆինանսավորելու հատուկ սեկցիայի հիմնական դրամագլուխ։

ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ-ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԲԵՇԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ԻԴԵՆԻ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ՓԱՐԻ ԶՈՒՄ

ԼՈՆԴՆ.— Քաղաքական շրջանները մեծ հետաքրքրություն ունեն բերում Իդենի զրույցը Բլյումի հետ Փարիզում (Իդենի՝ Ժենևից վերադառնալուց հետո)։ Թերթերը ընդգծում են, թե յերկու պետական գործիչների տեսակետները զուգադիպում են։

Մամուլի հաղորդագրության համաձայն, Իդենը և Բլյումը համաձայնել են, վոր նպատակահարմար կլիներ մշակել գործողությունների ընդհանուր անգլո-ֆրանսիական ծրագիր Իտալիայի վերաբերմամբ՝ Ազգերի լիգայի խորհրդի հետևյալ նիստից առաջ։

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԲՈՆԱԳՐԱՎԻՉՆԵՐԸ ՔԱՆԴՈՒՄ ԵՆ ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԻՍՊԸ

ՇԱՆՀԱՅ.— «Շանհայ իվնինգ պոստ» թերթը հաղորդում է, թե Նանկինի կառավարությունը բողոք և հայտնել ճապոնական իշխանություններին այն առթիվ, վոր ճապոնացիները Չինական Մեծ պարսպի աղյուսներն ոգտագործում են ճապոնական զորանոցներ կառուցելու համար։

ՃԱՊՈՆԻՈՆ ՋԱՐՔԵՐ Ե ԿԵՆՏՐՈՆԾՆՈՒՄ ՀՅՈՒՍԻՍՍԾԻՆ ՉԻՆՍՏՈՆՈՒՄ

ՆՅՈՒ ՅՈՐՔ.— Բեյպինից հաղորդում են, թե Ամերիկայի Միացյալ Նահանգների և մյուս յերկրների դիվանագիտական ներկայացուցիչներն ուսումնասիրում են այն լուրերի դրությունը, վոր ստեղծվել է ճապոնական կայազորները Հյուսիսային Չինաստանում ավելացնելու հետևանքով։

«Ասոշիեյտեդ պրես» գործակալությունը հաղորդում է, թե Ճապոնիան ներկա բոգելին Հյուսիսային Չինաստանում ունի հաշվարյա 10.000 զինվոր, վորոնք բավական են ռազմագիտական կետերում յերկաթուղային կայարանները և սավառնակայանները գրավելու համար։

Դիվանագիտական շրջանները մեծ ընդգծում են, թե չի յեղել վոչ մի ամպիսի «ինֆլատեզ», վորը արդարացներ այդ բանակությամբ ճապոնական զորքերի գալը։ Չինական շրջանները հայտնում են, թե ճապոնացիք ավելացնում են իրենց զորքերի թիվը նպատակ ունենալով նախապատրաստել Հյուսիսային Չինաստանի բռնագրավում, ինչպես և նախապատրաստվել Խորհրդային Միության դեմ պատերազմելու դեպքում։

ՍՈՎ. ԴՈՆՍՈՒ ՆԵՀՄԵՆԴՈՒՄ

ՇԱՆՀԱՅ.— «Սենտրալ Նյուս» գործակալությունը հաղորդում է Դանսու նահանգում տիրող սովի մասին։ Գործակալության ասելով, սովը և համաճարակները ընդգրկել են նահանգի շրջանը դեպի արևմուտք գտնվող բոլոր գավառները, Խուանխեյից դեպի արևմուտք հարյուրավոր մղոններով տարածված են սովի մատնված շրջանները և գտնվում են ծայրահեղ ամայի վիճակում։ Աղքատությունը կերակրվում է փչրանքներով, չունի զգեստ և պատսպարվում է կիսավեր ծղոտածածկ խրճիթներում կամ բացոթյա։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԵՄԱԿԵՆՏՐՈՆԾՅԱՆ ՃԱՄԲՐԱՐԻՑ

«Մանչեստեր Գարդիենն»-ը զեկուցել է Լախտինբուրգի գերմանական կենտրոնացման ճամբարի կալանավորներից մեկի նամակը, վորը պատկերում է այն տանջանքները, վորոնց յենթարկվում են այդ ճամբարի կալանավորները։ Ահա թե ինչ է գրում կալանավորը.—«Մեզ հանում են ժամը տասին։ Լսվում է հրամանը, «Գառակել, սողալ»։ Ստիպված պիտի ցեխով սողալ չորքթաթ ամբողջ արագությամբ։ Վայ նրան, ով կբարձրացնի գլուխը։ Վերատեսուչ Ա.Ն. կոշկովը հարվածում է բանտարկյալի վզին, նրա յերեսը խրում է ցեխի մեջ։

—Դե սողացեք ե...— ասում է յերկրորդ վերատեսուչ Բ. Ն.։

«Շրջվել» հրամանով մենք պիտի շրջադարձ կատարենք ցեխում։ «Ցեղնել։ Մարշ։ Մարշ վազք»։ Մենք վազում ենք... «Գառակել։ Սողալ։ Շրջվել։ Ա. բաց»։

Այդպես շարունակվում է, մինչև վոր վերատեսուչ Բ. Ն. խրտպոտանում է։ Վերջապես ել մենք արագ ենք կատարում հրամանը, նրան ելի քիչ է թվում։

Այնուհետև վերատեսուչ Բ.-ի ուղեղում նոր միտք է առաջանում։ Այժմ ել նա հրամայում է. «Թավալվել», և մենք բոլորս պիտի թավալվելով անցնենք բակի մի ծայրից մինչև մյուսը։ Ցիրը մենք գլորվում ենք մինչև պատը, լսվում է «շրջվել» հրամանը և մենք յետ ենք գլորվում։

Մեր բոլորի գլուխները ել ընկնում են։ պատել այնպես, վոր «կանգնել» հրամանից հետո վոչ վոք չի կարողանում վոտքի վրա կանգնել։ Մեծամասնությունն որորվում է ընկնում է։

—Այ, թե ինչ,— ծաղրում է վերատեսուչը.—Ցես տեսնում եմ, վոր ձեզ համար այդ քիչ է։ Շատ լավ։ Շարունակեցեք թավալվել։

Ցեղ թավալումները շարունակվում են։ Հետո բանտարկյալներին շարք են կանգնեցնում և հրաման է տրվում «Զգաստ»։ Այդ հրամանը կրկնվում է հարյուր անգամ։ Ընդմիջումների ժամանակ բանտարկյալներին հարկադրում են ծալել ծնկները։

Վերջապես, մի շարք են կանգնեցնում և հսկողության տակ հանդակներն (բարակները) են ուղարկում։

Նամակում նկարագրվում է նաև յերեք բանտարկյալների ծեծումը, վորոնք բռնվել են փախչել փորձելու ժամանակ։ Թերթը ասելով նամակի այդ տեղն այն քան սոսկալի չե, վոր անհնարին է վերարտադրելը։ Թերթի մեջ այդ փախստականների հակառակ դրքն վերաբերող մի քաղվածք է մեջ բերում այդ նամակից։

«Հաջորդ որը մենք իմացանք, վոր նրանցից մեկը մեռել է գիշերը։ Ցերկրորդն իրրև թե կախվել է իր կամքությամբ։ Ցերրորդի հակառակորդի մասին յես վոչինչ չիմացա»։

© National Library of Armenia OCR by Portmind

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԿ. ՄԱՐԿՈՍԻՍ (Ռ) ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՅԵՎ ՀՐԱԶԴՈՐԱԿՈՄԻ ՆԵԽԸՆԿԱՀՈՒԹՅԱՆ 1936 Թ. ՄԱՅԻՍԻ 15-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հացահատիկային կուլտուրաների 1936 թվի բերքահավաքի նախապատրաստական աշխատանքներն ընթացք հաջող կազմակերպելուն, բերքատվության բարձրացման ստալինյան առաջադրանքը կատարելու համար Ադրկոմկուսի (բ) Ստեփանավանի շրջկոմի բյուրոն և Շրջգործկոմի նախագահությունը վորոշում են.

1. Հաստատել Շրջհողվարչության պլանը բերքահավաքի մեքենաների նորոգման մասին։ Հանձնարարել ընկ. Մ. Ադամյանին՝ ապահովել վերանորոգման պլանի կատարումը—դաշտային զոնայում մինչև մայիսի 20 ը, մնացած զոնաներում մինչև հունիսի 1-ը։

2. Հաստատել մեքենայացրած հնձի պլանը՝ 1280 հեկ., կալման պլանը՝ 3050 տոն և խոտահարքի պլանը՝ 780 հեկտար։

Հանձնարարել Շրջհողվարչությանը, յուրաքանչյուր կոլտնտեսության հասցնել հնձի, կալման և խոտահարքի պլանները, սահմանելով խուրձակալի, կալիչի և խոտահար մեքենայի բերն վճռության որական կայուն առաջադրանքները։

3. Հաստատել կալսիչների աշխատանքի որացուցային պլանը քսան առանձին կոլտնտեսություններ։ Հանձնարարել ընկ. Մ. Ադամյանին՝ հրահանգել կոլտնտեսությունների նախագահներին՝ կալսիչներն ոգտագործել յերկու հերթի և աշխատանքը կազմակերպել այնպես, վոր պարապուրդ չառեղծվի և լրիվ կատարվի առաջադրված պլանը։

4. Առաջարկել Մեխանիկական գործարանի դիրեկտոր ընկ. Աշոտ Դանիելյանին մինչև բերքահավաքը կոլտնտեսությունների բերքահավաքի մեքենաների նորոգումը կատարել հերթից դուրս։

5. Առաջարկել գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների նախագահներին և կուսակցմակերպիչներին՝

ա). Կարգի բերել բերքահավաքի մեքենաները, նորոգել և պակասորդը լրացնել այն հաշվով, վոր բերքահավաքն սկսվի մեքենաների և ինվենտարների լրիվ սարքավորմամբ.

բ). Մինչև բերքահավաքի ընկիզբը նորոգել հանապարհները և կամուրջները խրձերի, կալսված հացահատիկի տեղափոխման համար.

գ). Վերանորոգել հակահրդեհային բոլոր գործիքները, յուրաքանչյուր կալում պատրաստ ունենալ ջրամբարներ և ջրով լիքը տակառներ, կալերի շուրջ կողմը յերկու մետր լայնությամբ գուբանով հերկել.

դ). Բարդող ուժը ռացիոնալ ոգտագործելու համար այժմվանից կազմակերպել լծկան անասունների խնամքը, անասնապահներին ամրացնել լծկաններին և հետևվել, վոր գիշեր ու ցերեկ արածացնեն լավորակ արոտատեղիներում.

յե). Մերժացուների համար հատկացնել հատուկ պահեստներ, բաժանման յենթակա հացահատիկների պահեստներից առանձնացված.

ե). Մերժացվի համար նախատեսված արտերը հնձելուց հետո կալսել առանձին և տալ.

թ). Հացահատիկների հաշվառքը կանոնավորելու նպատակով կալսված հացահատիկը կշռել 2 անգամ—մեկ կալսելուց հետո, մեկ էլ պահեստին հանձնելու ժամանակ։ Այդ նպատակի համար անհրաժեշտ է դիմել ՍԵԼԽՈԶՍՆԱՐԻ Ստեփանակերտի բաժանմունքին՝ կշռաքներ ստանալու համար։

ը). Մերժացուների վորակն էլ ավելի բարձրացնելու համար տեղերում կազմակերպել ԿՈՐՏԻ և ՓՆՋԻ աշխատանքները.

յ). Պահեստների վերանորոգումը բոլոր կոլտնտեսություններում ավարտել մինչև հունիսի 1-ը։

6. Ենդրել Մարզհողվարչությանն արագացնել ախտահանող դեղորայքի բաց թողնումը։

Ընկ. Մ. Ադամյանին՝ կոլտնտեսություններում կազմակերպել պահեստների գազացիան և ախտահանումն այն հաշվով, վոր աշխատանքները դաշտային զոնայում ավարտվի մինչև մայիսի 25 ը, մյուս զոնաներում՝ հունիսի 5 ը.

7. Կուսշրջկոմի բյուրն յեվ Շրջգործկոմի նախագահությունը պահանջում են գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների նախագահներից և դաշտավարական բրիգադավարներից խնամքով պահպանել դարմանը, այն տեղը վորել նորոգված դարմանանցներում կամ դիզել այնպես, վոր մթնոլորտային տեղումներից չփչանան։ Բերքահավաքի աշխատանքները կազմակերպել այնպես, վոր՝ «վոչ մի հասկ դաշտում, վոչ մի հատիկ կորուստ» նշանաբանն իրագործվի, լայն ծավալով ստախանովյան շարժումը կոլտնտեսականների մեջ, բարձրացնելով վերջիններիս արտադրական խանդավառությունը։

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (բ)
ՍՏԵՓՇՐՋԿՈՄ.
ՍՏԵՓՇՐՋԳՈՐԾԿՈՄ

ՊՐՈՊՍԵՄԻՆԱՐՆԵՐ ՉԵՆ ԳՈՒՄԱՐՎՈՒՄ

Ջրաբերդի կոմյերիտշրջկոմը վոչ մի ուշադրություն չի դարձնում պրոպսեմինարներ գումարելու խնդրին, ինչ վատ է անդրադառնում քաղուսուցման աշխատանքների վրա։

Նախատեսված է շրջանի 5 զոնաներում կոմյերիտքաղխմբակավարների սեմինարներ գումարել, վորի դեկավարման համար առաջադրված են համապատասխան ընկերներ։

Սակայն կոմյերիտշրջկոմը բավականանալով դրանով, ամեն ինչ այդ ուղղությամբ համարել է ավարտված և վոչ մի զոնայում էլ սեմինարների պարապմունք չի ունեցել։

Մի քանի անգամ պրոպսեմինարների դեկավարները ներկայացել են նշված տեղը, սակայն կոմյերիտքաղխմբակավարներից վոչ վոք էլ չի ներկայացել և այդպիսով պարապմունք չի կայացել։

Այս առթիվ մի քանի անգամ հայտնվել է կոմյերիտշրջկոմին, բայց վերջինս դարձյալ չի հետևել և կոմյերիտքաղխմբակավարների աճեցման ու նրանց ոգնելու գործը թողել է իրերի բնական ընթացքին։

Պիտի լուրջ դրդել կոմյերիտքաղխմբակավարների աշխատանքներով և նրանց ոգնելով ու աճեցնելով ապահովել կոմյերիտականներին Լենինի-Ստալինի ուսումունքով զինելու մեծ և պատվավոր գործի հաջող ընթացքը։

Ի.

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ

Մաղավուզի գյուղխորհրդի վերաստուգիչ հանձնաժողովի նախագահը Մարգիս Հովհաննիսյանն է։ Նա ընտրված օրը ընդարձակ հառով հասարակական ընդհանուր ժողովում յելույթ ունեցավ և մի շարք պարտավորություններ վերցրեց։ Նա նաև հանձն առավ սիստեմատիկաբար ստուգել գյուղխորհրդի աշխատանքները, կոնկրետ գործով ոգնել նրան։ Սակայն այդ պարտավորությունները չկատարեց։ Նա գյուղխորհրդի աշխատանքներով չի զբաղվել, իր խոստումները չի կատարել։

Վերաստուգիչ հանձնաժողովի թուլության հետևանքով գյուղխորհրդի և սեկցիաների աշխատանքները վատ են ընթանում։

Կուլտուրական սեկցիան իր ֆունկցիաները չի կատարում։ Նա բոլորովին չի տեղեկանում։ սեկցիայի նախագահ Ա. Հովհաննիսյանը կուլտսեկցիայի անդամներին ի մի չի հավաքվում, չի հոգում գյուղում կուլտուրական աշխատանք ծավալելու մասին։

Վերաստուգիչ հանձնաժողովի անգործությունից ոգտվելով գյուղխորհրդի հաշվապահ Գուրգենը 161 ռուբլի փող և յուրացրել։

Անհապաղ պիտի կանոնավորել հանձնաժողովի աշխատանքները։

Ս. ՍԱՐԱԿ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԳԵՏ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Յերեք ամիս սրանից առաջ կոմունիստներ Աղա Գաբրիելյանը, Իվան Գեվորգյանը և Ռոման Պողոսյանը այրուբենական անգրագետ էին և համարվում էին պասսիվ։ Նրանք կտրված էին գրքերից, թերթերից, որվանից դիրքերի մասին գաղափար չունեին և չէին էլ կարող բարձը պահել կոմունիստի կոչումը։

Կուսակցության Մարտունու շրջանային կոմիտեն, յերբ սկսեց առանձին հոգատարությամբ շրջապատել այրուբենական անգրագետ կոմունիստներին և նրանց համար ճարտարում հատուկ դասընթաց բաց արեց, ահա այդ դասընթացում մի շարք կոմունիստների հետ միասին սկսեցին սովորել և հիշյալ 3 ընկերները։

Յերեք ամսվա ընթացքում այդ կոմունիստները շատ բան սովորեցին։ Ահա Աղա Գաբրիելյանը (Ամարասի կուսակազմակերպության անդամ և խորհրդային քաղաքային ֆերմայի վարիչ)։ Նա այժմ թերթերի ու գրքերի մասին բարեկամն է, ազատ կարդում է, անձամբ նամակ է գրում շրջկոմին, թե ինքը ինչ է սովորել և իրեն շատ յերջանիկ է համարում, վոր կարճ ժամանակամիջոցում վերացրել է իր անգրագիտությունը։ Ընկ. Աղա Գաբրիելյանը գնել է մի շարք գրքեր, բաժանորդագրվել է «Կոմունիստ», «Խորհրդային Ղարաբաղ» թերթերին և սիստեմատիկաբար ընթերցում է այն ու իր տպավորությունների մասին հաղորդում իր ընկերներին։ Նա ֆիզիկայում լավ կազմակերպել է թերթերի բարձրաձայն ընթերցումը, գրավում է խորհրդարանների դիտական մակարդակի բարձրացումով և այժմ կուսակազմակերպության մեջ աչքի յե ընկնում իր ակտիվությամբ։

Նույնն է և Իվան Գեվորգյանը, վորն ստանում է տպագրական թերթեր. գնել է ընկ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի առթիվ» գիրքը և այն լավ ուսումնասիրում է։

Ռոման Պողոսյանը (Թաղավարի սկզբնական կուսակազմակերպության անդամ) հիշյալ կուսակցական դպրոցի ամենալավ սովորողներից մեկն է։ Նա այնքան է առաջ գնացել, վոր այժմ ոգնում է հետամնաց սովորողներին։ Ընկ. Պողոսյանը հատուկ ուշադրություն է դարձնում իր քաղդիտելիքների մակարդակը բարձրացնելու վրա և լավ հետևվում է միջազգային դրությանը։

Ճարտարում կազմակերպված կուսակցական դպրոցում բարձր խղճորեն են աշխատում ուսուցչուհի Վարդիթեր և ուսուցիչ Սուրեն Հայրապետյանները։ Այս ընկերների լավ աշխատանքի հետևանքով է, վոր անգրագետ կոմունիստները դրագետ են դառնում։

Հ. ԽԱՉԻԿ

ԿՈՒՍԱՆԴԱՄ ԱՐՍԵՆՆ ԱՃՈՒՄ Է

Նոր-Շենի սկզբնական կուսակազմակերպությանդամ Արսեն Դավթյանը մինչև կուսփաստաթղթերի ստուգումն իր վրա շատ քիչ ներ զբաղվում և քաղդիտելիքների ցածր մակարդակ ուներ։

Նա կտրված էր թերթերից ու գրքերից և իմացածն էլ մոռանում էր։ Կուսփաստաթղթերի ստուգման ժամանակ շրջկոմում նրան մի շարք խորհուրդներ տրվեց։ վոր նա պիտի լուրջ ընդդիմի իրենով, այլ կերպ նա կուսփաստաթղթերի փոխանակման ժամանակ կարող է դուրս մնալ կուսակցության շարքերից։

Դրանից հետո ընկ. Ա. Դավթյանն սկսեց, ինչպես հարկավոր է, զբաղվել իրենով և ինքնակրթությամբ զբաղվելով բավական աճեց։ Նա լավ կապվելով մասուլի հետ, ընթերցանության մեջ վարժվեց և սկսեց ուսումնասիրել կուսակցության և կառավարության վորոշումները։ Նա շատ հետաքրքրվում է միջազգային դրությամբ և այդ մասին խոսելուց, նա լավ պատկերում է միջազգային իրադարձությունները։

Կուսքաղխմբակի պրոպագանդիստն այժմ շատ գոհ է Դավթյանից և ասում է, վոր վերջինս ամենալավ և կարգապահ սովորողն է համարվում քաղխմբակում։

Արսենը մի շարք գրքեր է գնել և իր համար ստեղծում է փոքրիկ գրադարան։ Նա կուսկոնսուլտացիոնները ու Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմությունը լավ յուրացրել։ Նա աշխատում է, վոր կուսփաստաթղթերի փոխանակումը դիմավորի քաղաքական գիտելիքների բարձր մակարդակով։

ԹՈՒՆՈՒՆՑ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏՈՒՄ ԵՆ

Կոմյերիտականը հեղափոխական որինականության ամրապնդման, պաշտպանման առաջավոր մարտիկը պիտի լինի։ Նա անհաշտ պայքար պիտի մղի հեղափոխական որինականության խախտողների դեմ։ Սակայն Աղաբեկյանի (Զրաբերդի շրջան) գյուղի կոմյերիտկազմակերպիչ Մերգեյան Սայյանը գյուղում կոպտորեն խախտել և հեղափոխական որինականություն։

Զորբորդ դասարանի աշակերտուհի Աբիգենիկ Հովհակիմյանն անչափահաս է։ Մերգեյանը վորոշել է նրա հետ ամուսնանալ։ Աղջիկը բժշկական ընթերցության պարզվել է, վոր 12 տարեկան է։ Բժիշկը հրաժարվել է ամուսնության իրավունք տալ, բայց Աղաբեկյանի կոմերիտվարչության նախագահ Բալուշյանի և կուսկազմակերպիչ Գ. Բալուշյանի միջամտությունից հետո բժիշկն ստիպված է յեղել կեղծել աղջկա տարիքն և 12 ի հանդեպ 16 տարեկան վկայական տալ։

Նման խեղաթյուրումների դեմ անհաշտ պայքար պիտի մղվել։

ԿՈՄՍԵՐԻՏԱԿԱՆ

© National Library of Armenia

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐԱՆՈՐ ՄԱՐՏԻԿՆԵՐ ԿԿՈՓԵՆՔ

«Միլիցոներն աշխատավոր ժողովրդի գավակն ու բարեկամն է, նա ամբողջ խորհրդային ժողովրդի հետ միասին կառուցում է իր հայրենիքի յերջանկությունը» (Պրավդա)։ Նա դուրս է յեկել աշխատավոր ժողովրդի ծոցից, վորն իր դասակարգի, աշխատավորների շահերի պաշտպանությունն ամեն ինչից բարձր է դասում։ Ցեվ պատահական չէ, վոր խորհրդային միլիցոները ՆՈՒՀՊ-ի բոլոր ազգությունների աշխատավորների սերն ու հարգանքն է վայելում։ Խորհրդային միլիցիոները կոչված է արթուն ու զգաստ պահակի դեր կատարելու, խորհրդային քաղաքացուն անձի, սոցիալիստական սեփականության, աշխատավորներին պորտաբուծներից, դասակարգայնորեն խորթ տարերից, յերկրի ներսում որինակելի կարգ ու կանոն պաշտպանելու։

Հեղափոխական պայքարի բովումն է կուփվել նաև Հադրութի շրջանի Տուժի գյուղի նախկին չքավոր գյուղացու գավակ Գարեգին Գրիգորյանը։ Վերջինս մինչև Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը շատ դառնություններ ու զրկանքներ է տեսել և այն ամենն իր կաշվի վրա զգացել։ Գարեգինը փոքր հասակից դաշնակների, վերջիններիս թափթփուկների, տեղական քեռ նիսաների — ավանդատերերի, գյուղի պարպիտների վիրավորանքները շատ է կրել, և նրա վարկաբեկված պատիվը վերականգնվել է միայն խորհրդայնացումից հետո։

Բանվորա-գյուղացիական միլիցիայի շարքերն անցնելով և շարքային միլիցիոների պաշտոն ստանձնելով, աշխատավորների վոխերիժ թշնամիներին կազմալուծելու պայքարին լծվելով, Գարեգին Գրիգորյանը խաղաղ ծառայություններ է մատուցել իր հարազատ կառավարության, կարգապահության, հլուսապահության և նվիրվածության բարձր ցուցանիշներ հայտնաբերելու շնորհիվ առաջադրվել և լիապատասխան, ապա մարզային հետախույզ բաժնի պետի և մարզմիլիցիայի ոպերատիվ պաշտոնի։ Նրա ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Մարզում քրեական հանցագործության դեպքերն որ-որի պակասում են։ Սոցիալիստական գույքի պաշտպանման, Մարզում կարգ ու կանոն ստեղծելու խրոնդիրներում ցուցաբերած խաղաղ ծառայությունների համար Գարեգին Գրիգորյանը մի քանի անգամ պարգևատրվել է ժամացույցով, փողով և զանազան իրերով։

1935 թվին չարագործներն Ուլուբաբ գյուղի կոլտնտեսության 6 գոմերը հափշտակել էին։ Հետախույզ բաժնի նախկին պետը հանցավորներին չկարողանալով հայտնաբերել՝ այդ գործն արխիվ էր նետել։ Ընկ. Գարեգին Գրիգորյանն սկսեց զբաղվել այդ գործով և կարճ ժամանակվա ընթացքում յերևան հանեց չարագործներին։

Սույն թվի մարտ ամսում չարագործների մի խումբ գիշերը Ստեփանաերտի Քաղկոոպ կոլտնտեսային շուկայի խանութը կոտրել և 4000 ռուբլու ապրանք էր հափշտակել։ Գարեգին Գրիգորյանի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ յերեք որվա ընթացքում չարագործները հայտնաբերվել են և կալանավորվել, իսկ 4000 ռուբլու ապրանքը վերադարձվել է Քաղկոոպին։

— Մենք խաղաղ հաղողություններ ունինք միլիցիայի նորանոր կադրեր, իսկական մարտիկներ պատրաստելու բնագավառում, սակայն դա դեռ բավական չէ — ասում է ընկ. Գարեգին Գրիգորյանը։ — ՆՈՒՀՊ կենտգործկոմի և ժողկոմխորհի վորոշումը միլիցիայի համար հատուկ կոչումներ սահմանելու մասին՝ նոր ավելի կամրացնի կարգապահությունը միլիցիայի շարքերում։ Ցեռ խոսք եմ տալիս այդ բնագավառում, վորքան ուժերս ներին, պայքարել կարգապահ, հլուսապահ և դգաստ, սոցիալիստական հայրենիքին նվիրված նորանոր կադրեր պատրաստելու, դաստիարակելու համար։

Բոլշևիկի խոսքը խոսք է և այն կկատարվի հլուսությամբ։

ԱԴՐԲԵՋԱՆ — ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՑՄՐՑՈՒՄ

ԲԵՐՔԱՀԱՎԱԿԻՆ ԴԻՄԱԿ ՈՐԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ

«ԴԵՌ ԺԱՄԱՆԱԿ ՐԱՏ ԿԱ»

Բերքահավաքը շուտով սկսվելու է, դաշտային գոտում արդեն սկսել են խոսք հարել, իսկ Ենձիքստանում դեռ բերքահավաքի ուղղությամբ վոչ մի նախապատրաստական աշխատանք չեն տանում։

Դաշտավարական բրիգադներում աշխատանքի հավասարաչափ բաշխում դեռ չի կատարվել, սպասում են հունձն սկսվի՝ հետո։

Բրիգադավարներն իրենց ձեռքի տակ յեղած ինվենտարը մին չեվ որս չեն հաշվառել։

Վեց պահեստներից վոչ մեկը չեն վերանորոգել ու ախտահանել։ Չեն վերանորոգել նաև մարագները։ Վորոված և յեղել նոր մարագներ կառուցել, բայց շինանյութիր չկան։

Լծկանների հանգիստը չեն կազմակերպում։

Գյուղխորհուրդը և կոլտնտեսությունը բերքահավաքին նախապատրաստվելու մասին չեն մտածում, ասելով վոր դեռ ժամանակ շատ կա։

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ

ԽՈՏԱՀԱՊՔԵՐՆ ՈՒ ԱՐՏԵՐԸ ՓՉԱՑՆՈՒՄ ԵՆ

Այս տարվա փետրվար յեվ մարտ ամիսներում Նախիջևանի կի կոլտնտեսություն անասունների կեր չունենալու պատճառով դժալի դժվարություններ և կրելու։ Վատ խնամքի, անկանոն կերակրելու հետևանքով 6 լծան նիհարել ու սատկել են կոլտնտեսությունն այդ որերին մի քիչ դարման ձեռք բերելու համար սարքված և յեղել բավական նաչափ փող ծախսել։

Թվում էր, թե Նախիջևանիկի կոլտնտեսությունն այդ հաշվի կաներ և այժմվանից կծավալեր պայքարը կերային հզոր բազա ստեղծելու համար։ Բայց հակառակը դուրս յեկավ։

«Ղարախանանց խոպան» յեվ «Քաբին տակ» հողամասերն անցյալ տարիներին բավականաչափ խոտ են տվել, բայց այս տարի այդ խոտահարքերը չեն պաշտպանում։ Գյուղի անասունները վիրոնիչյալ խոտատեղերում արածացնում, փչացնում են։

«Աբխին տակ» կոչված հողամասի խոտը նույնպես չեն պաշտպանում։ Ամեն որ այդտեղ կարելի յե տեսնել ազատ շրջող ձիեր, եշեր և այլ անասուններ։

Կոլտնտեսության բրիգադավարներ Ամիրջան Սարուխանյանը, Իշխան Ասրյանը և Ավանես Ղարախանյանը խոտահարքերը և արտերը պաշտպանելու փոխարեն, իրենց ել մի կողմից են փչացնում։ Նրանց ձիերն ամեն որ կարելի յե տեսնել արտերում և խոտահարքերում։

Արտերն ու խոտահարքերն արածացնողներին պատասխանատվության չեն յենթարկում։ Գյուղխորհրդի նախագահ Ղուկաս Դանիելյանն այս ամենին նայում է անտարբերությամբ։

Մ. Ս.

ՄՐՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայսահատիկային կուլտուրաների բարձր բերքատվությունն ապահովելու համար Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները մրցում են իրար հետ։ Սոցիալիստական մրցության պայմանագրում առանձին տեղ է հատկացվել բերքահավաքի խնդիրներին։

Մրցող կողմերը պարտավորվել են բերքահավաքը տանել բուլնիկյան կազմակերպվածությամբ, վճռական պայքար մղել կորուստների դեմ։

Ադրբեջան Հայաստան մրցության խնդիրները պատվով կատարելու համար Ջաբրդի շրջանի առաջավոր կոլտնտեսությունները լայն պայքար են ծավալել։ Այդ պայքարից յետ չի մնում նաև մեր, Մոխրաթաղի կոլտնտեսությունը, վորն արդեն պատրաստ է բերքահավաքին։

Կոլտնտեսությունը բրիգադավարների հետ միասին առանձնացրել է հնձվորներ 100 հոգի և խոտ հարողներ՝ 40 հոգի։

Կազմակերպվել են նաև հատուկ հավաքող ոգակներ. այս տարի կոլտնտեսականները պիտի հնձեն 329 հեկտար արտ և հարեն 245 տոննա խոտ։

Հնձվորները և խոտ հարողները ապահովված են անհրաժեշտ ինվենտարով։

Քուրձերը կալ տեղափոխելու համար դաշտավարական բրիգադներն ունեն 31 սայլ, վորոնցից 11-ը նոր են պատրաստել։

Բերքահավաքին պատրաստ են նաև աշխատավոր ժենատները։

Մոխրաթաղի գյուղխորհուրդը և կոլտնտեսությունը կարողանում են բերքահավաքի նախապատրաստական և բաժանկոնների մշակման աշխատանքներն իրար զուգորդած տանել։

Բայց այս ամենը միայն գործի սկիզբն է։ Խնդիրը կայանում է նրանում, վոր սկսած գործը մին չեվ վերջ տանել կազմակերպված։

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՏԱՀԱՎԱՔՈՒ ՇՂՐՈՒԹՈՒՆՈՒՄ

Անասունների համար կերային հզոր բազա ստեղծելու համար Գյուլեն Ձաբատարի կոլտնտեսականները նշանաբան են ընդունել «Ոչ մի բուռ խոտ չտալ»։ Ուրբաթ կոլտնտեսական այժմ աշխատում են Աղբուլաքի հողամասում։ Նրանք տիեզերական խոտ են հարում։ Կոլտնտեսականներն առաջին մի քանի որվա ընթացքում հարել ու շորացրել են 200 սայլ խոտ։ Մի-ջոցներ են ձեռնարկվում հավաքած խոտը փչացումներից պաշտպանելու համար։

Գյուլեն Ձաբատարի կոլտնտեսականները պատրաստ են նաև հացահատիկների բերքահավաքը սկսելու։

Բերքահավաքի ֆրոնտում աղխատելու համար առանձնացվել են 158 կոլտնտեսական։ Վերանորոգվել են հնձիչ մեքենան, ժանգաղները և 60 սայլ։

190 զույգ լծկանների համար 15 որյա հանգիստ և կազմակերպվել։

Նախատեսվել և պաշտում ուենալ որինակելի հաշվառում։

ԽԱՉԻԿ ԲՆԱՐՈՒՆԻ

ԻՆՉՊԵՍ ԿԴԻՏՎԻ ԱՐԵՎԻ ԽԱՎԱՐՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Անդրֆեդերացիայում արևի խավարումը կդիտվի իբրև մասնավոր խավարում, մեծ փուլով (ֆազայով)։

Գազրայում փուլը կլինի 0,98, այսինքն արևի տրամագծի 98 հարյուրերորդ բաժինը կծածկվի խավարով, և բաց կմնա տրամագծի սկավառակի միայն մի նեղ յեղջյուր՝ տրամագծի յերկու հարյուրերորդի լայնությամբ։ Սուխումում փուլը կլինի 0,86, Բաքվում 0,93, Բաթումում՝ 0,92, Թբիլիսում և Թելավում — 0,89, Լենինականում — 0,88, Ցերևանում — 0,86, Բագվում — 0,82, Լենքորանում — 0,78, Ստեփանակերտում՝ 0,80։

Անդրֆեդերացիայում արևի խավարումը կդիտվի իբրև մասնավոր խավարում, մեծ փուլով (ֆազայով)։

Գազրայում փուլը կլինի 0,98, այսինքն արևի տրամագծի 98 հարյուրերորդ բաժինը կծածկվի խավարով, և բաց կմնա տրամագծի սկավառակի միայն մի նեղ յեղջյուր՝ տրամագծի յերկու հարյուրերորդի լայնությամբ։ Սուխումում փուլը կլինի 0,86, Բաքվում՝ 0,93, Բաթումում՝ 0,92, Թբիլիսում և Թելավում — 0,89, Լենինականում — 0,88, Ցերևանում — 0,86, Բագվում — 0,82, Լենքորանում — 0,78, Ստեփանակերտում՝ 0,80։

Անդրֆեդերացիայում արևի խավարումը կդիտվի արևի ամենավաղ ժամը 7 իշ մի փոքր առաջ (Թբիլիսի ժամանակով) և կվերջանա ժամը 9-ին։ Խավարման սկիզբը Բագվում տեղի կունենա ժամը 8 և 55 րոպեին, Թբիլիսում՝ 8 և 56 րոպեին, Ցերևանում — ժամը 8 և 54 րոպեին, խավարման վերջինքը՝ Բագվում և Թբիլիսում — ժամը 7 և 55 րոպեին, Ցերևանում — ժամը 7 և 55 րոպեին, խավարման վերջը՝ Բագվում — ժ. 9 և 05 րոպեին, Թբիլիսում — ժամը 9 և 03 րոպեին և Ցերևանում — ժամը 9-ին։

Արևի խավարում այդպիսի փուլով նկատվել է Անդրկովկասում 1914 թ. ագոստոսի 21-ին, վորի լիակատար շրջանը գրանցվում էր Կովկասից դեպի արևելք։

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԿԱՆ ՍՈՒՐԻՆ ԿՈՒՂԱՐԿՎԵՑ ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ

Ցեմքշանի կոլտնտեսության հաշվետար Շահեն Հայրապետյանը իր պարտականությունները կանոնավոր չի կատարում և դեպի կոլտնտեսականները միանգամայն բյուրոկրատական վերաբերմունք և ցույց տալիս։

Վերջերս հաշվածային կոլեգն տեսուչներ Անուշ Հովսեփյանը և Ասողիկ Բալայանը ժամանելով գրասենյակ՝ խնդրել են, վոր իրենց վճռակած աշխատանքի մասին տեղեկություն տա։ Հաշվետարը հայտարարում է. «Ձեր աշխատանքների համարները տանք, ստուգեմ, իսկ յերբ չգի տանք, դուրս գնացեք»։

Կոլտնտեսային կանոնադրության համաձայն ԱՐՏԵԼԻ ՎԱՐՁՈՒ ԹՑՈՒՆՆ ԱՄԵՆ ԱՄԻՍ ԿԱԽՈՒՄ Է ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ։ ՆԵԵԼՈՎ ԱՆՑԱԾ ԱՄՍՈՒՄ ՆՐԱՆՑ ՎԱՍՏԱԿԱԾ ԱՇԽՈՐԵՐԻ ԳԱՆԱԿԸ», կանոնադրության այդ կետը չկատարելու պատճառով և, վոր կոլտնտեսականներն ստիպված են լինում աշխարքի դրությունն իմանալու համար դիմել հաշվետարին։ Իսկ հաշվետարն ինչպես տեսանք կոլտնտեսականների խնդիրը չի բավարարում։

Հաշվետարին կարգադրված է կիրակի որերն աշխատել (վորպեսզի կոլտնտեսականներն իրենց ցանկացած հաշիվները պարզեն) և հանգստի որ պահել յերկուշաբթին։ Բայց գրասենյակը փակ է լինում թե կիրակի, թե յերկուշաբթի որերին։

Ցե.

© National Library of Armenia

ԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԽԱՆՈՒԹԸ ՎԱՏ Է ՍԱՏԱԿԱՐԱՐՎՈՒՄ

Մաղավուզի կոմբինատիս-թյան «Թեթև հեծելազորը» ռեյդ և կազմակերպել՝ պարզելու գյուղ-կոոպի խանութի վիճակը։

Ռեյդը պարզեց, որ Մարդա-կերտի գյուղկոոպը Մաղավուզ գյուղի խանութին անհրաժեշտ ապրանքներով չի բավարարում։

Մարդակերտի գյուղկոոպն այդ բաժանմունքին զբենական պիտույքներ չի բաց թողնում։

Մասսայի ճաշակին համապա-տասխանող ապրանքներ չկան խանութում։ Այն հարմարու-թյունները չուն։ Աղը, այլուրը թափված են խոնավ գետնին։

Խանութում 1931 թվականից ապրանքներ կան թափված, բայց չեն գտնվում, որովհետև դը-բանը կարիքը մասսան չի զգում։

1932 թվականից հաստ 40 ռուբլիանոց 10 ապրանք կա ընկած, չնայած ապրանքի կարիքն զգալի է, բայց շատ քանկ են գնահատված, որի պատճառով գը-նորդները գնելուց խուսափում են։

Գործակատար Մուշեղ Հովհան-նիսյանը բարեխղճորեն և աշխա-տում, բայց Մարդակերտի գյուղ-կոոպը աշխատելու պայմաններ չի ստեղծում։ Նրա խանութում 190 տեսակ ապրանքի հանդեպ 95 տեսակ ապրանք կա։

Այդ վիճակից Մաղավուզի կոոպի խանութը պիտի հանել։

Մ.

ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՍՊԵՏԸ

Ազգիշլեսորդի, Ստեփանակերտ բաժանմունքի հաշվապահ Լոտիկը պարզիանների այն շրջանին և պատկանում, որ ստորին աղակի աշխատակիցներին ահ ու սարսափի մեջ գցելով իրենց դիրքը խայտառակաբար ոգտագործում են անձնական շահերի համար, կամ բացարձակ հափշտակության դիմում։

Այդ պարզիքը Ազգիշլեսորդի Ստեփանակերտի № 1 խանութ թից 205 ռուբլու քանակով ապրանք է գնել և ուղարկել տուն, ապա գործակատարին հայտնել, որ փողը տանն է թողել, հաջորդ օրը գործակատարը կարող է գրասենյակում իրենից ստանալ։ Բայց այդ ամենը գործակատարին հանգստացնելու միջոց է եղել։

Դրանով չբավականանալով Լոտիկը ամսույս 16-ին պիշերվա ժամը 12-ին մտել է նույն խանութը և գործակատար Աբրահամ Պետրոսյանին հրամայել է 60 ռուբլի և 5 տուփ ծխախոտ տալ։ Արբսառդոսը նրան մերժել է։ Լոտիկը չդադարանալով, նրան բռնի նստացնելու, հաշիվները բռնելու սպառնալիքներ է կարդացել։

Սպառնալիքներ կարդալու ճանապարհով 156 ռուբլու ապրանք և վերցրել գործակատար Ռատրա Ալիևից, գործակատար Թաքիից՝ 115 ռուբլու, Թաշտուր Ջալալյանից՝ 60 ռուբլու, 300 ռուբլի Հրանտ Ղազարյանից (գործակատար) և 500 ռուբլու Ազգիշլեսորդի Շուշվա խանութի գործակատարից։

Ցավ այդ չարագործը գեռ պաշտոնավարում է։

ՀԱՐՎԱԾՈՂ

ԿՈՆԿՐԵՏ ԱԶԽԱՏԱՆՔԻ ՊԻՏԻ ԱՆՑՆԵԼ

Ասոավիաքիմի Հայրենիքի շրջ. խորհրդի նախագահ Մելիք Գաբրիելյանը շրջանի Ասոավիաքիմի կազմակերպություններին վատ ղեկավարում։

Ծաղոր և Շաղախ գյուղերում Ասոավիաքիմի կազմակերպություններ կան։ Առաջինն ունի 125 անդամ, յուրաքանչյուրը՝ 67։

Սակայն յուրաքանչյուր գյուղերում էլ Ասոավիաքիմի անդամներն անդամավճարները ժուռել են, բայց տուս չեն տացել։ Գանձված անդամավճարների տեղը հայտնի չէ։

Ասոավիաքիմի խմբակների դեկավարները, գանձապահները և տուգիչ հանձնաժողովները վոչ մի աշխատանք չեն տանում։

Ծապալված են ռազմական պարապմունքների աշխատանքները, որովհետև հրացաններ, փամփուշտներ չկան։

Ասոավիաքիմի վարչությունները իրենց ընդհանրապես դրաբաշխված սպիտակ է։ Այդ գործաբաշխվը ամենամեծ դեր կխաղա Ասոավիաքիմի աշխատանքներում բնկում մտցնելու խնդրում։

Շաղախի և Ծաղորի Ասոավիաքիմի կազմակերպությունները պիտի ակտիվ, բարեխիղճ և գործունյա մարդկանց ընտրեն վարչություններում և վճռական միջոցներ ձեռնարկեն թաքստոցներ մտցնելու այդ կազմակերպությունների աշխատանքները։

ՌՈՒԲԵՆ և ՑԵՐԵՄ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԻՏԻ ԹԵՐԱՍՑՆԵԼ

Մալիբեկլու գյուղի խորհրդի ճանապարհաշինարարական սեկցիան իր վրա գրված պարտականությունները չի կատարում։

Հանին բաղ—Մալիբեկլու ճանապարհը խիճելու խնդիրը շատ վաղուց է դրված, սակայն վոչ մի աշխատանք չի սկսված։ Մատանշված ճանապարհը փչացել է։ Ցուրտոնները, ասլիերն ու կառքերը դժվարությամբ են շարժվում։

Կարկառ գետի վրա կառուցված կամուրջը փչացել է, տախտակները փտել են, վերանորոգելու մասին հոգացող չկա։

Հատ գլանի Ղուշչիլար—Մալիբեկլու ճանապարհն այս տարի պիտի վերանորոգվի, բայց այդ ուղղությամբ աշխատանք չի տարվում։

Ճանապարհաշինարարական սեկցիայի աշխատանքները Մալիբեկլու գյուղի խորհուրդն անհապաղ պիտի քննադատի։

Մ.

ԿԱՐՃ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

ՀՂԻ ՁԻՆ ՍՊԱՆԵՑԻՆ

Դաշուշենում ձիերի վրա կանոնավոր հսկողություն չկա, որի հետևանքով ի հղի ձի կռվելով ձիերի հետ, ընկել և մի ցցված փայտի վրա և սատկել։ Ցերեսյի վարիչ Բ. Հարությունյանը և ձիերին հսկող Ջ. Հովսեփյանը դրա համար պատասխանատվության չեն յենթարկվել։

ԱՂ.

ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԸ ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԻՆ

Ներքին Հոռաթաղի կոլտնտեսության անդամ Ավագ Մարտիրոսյանը բանվոր ձիերից մեկին շատ քշելով քրանեցրել ու թողել և սկզբանցիկ ջամու տակ։ Ձին հիվանդացել և Մարտիրոսյանը անասնաբուժին դիմելու փոխարեն կանչել և Մարտիրոս Քարդուժյանին, և ձիուց արյուն են վերցրել։ Արյունհոսության հետևանքով ձին սատկել է, իսկ հանցագործները մնացել են անպատիժ։

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ

ՑՈՒԼԻՆ ՎԱՏ ԵՆ ԽՆԱՄՈՒՄ

Զանգեզի գյուղի կոլտնտեսությունը չուքյունը 1000 ռուբլով մի ցուլ է գնել, բայց այդ ցուլի նկատմամբ կանոնավոր խնամք չի տարվում։ Ցուլին ժամանակին չեն կերակրում, հսկողությունը բացակայում է։

Վերջերս ցուլը կորել է և գտել են այն ժամանակ, երբ ցուլը հասել է Վերին Սղնեք։

Կ.

ԿՈՎԵՐԻ ԲԵՂԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ծմակահողում կովերի բեղմնավորման գործը չեն կազմակերպում։ Կոլտնտեսականների անհատական ոգտագործման տակ գտնվող 57 կովերից բեղմնավորվել են միայն 2 ը։ Մենատնտեսների 9 գլուխ կովերից վոչ մեկը չի բեղմնավորված։

ԱՐՄԵՆԱԿ

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Գերասիմ Գաբրիելյանին և հանձնված Բոլոփակ գյուղի կոլտնտեսության գոմեշների խնամքը, բայց նա իր վրա վոչ մի պատասխանատվություն չի զգում։ Նրա խնամքի տակ գտնվող 29 գլուխ գոմեշները չափազանց նիհարել են։

Գերասիմը գոմեշներից մեկին սպանել և և յերեքի աչքը կուրացրել։

Կոլտնտեսությունն այդ չի ուզում տեսնել։

ԿՈՐՇԵՆԻՏԱՀԱՆ

ԳԻՏՈՒՐԱՅԻՆ ՑԵՎ ՏԵԽՆԻԿԱ

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏ ԱԶԴԱՆՇԱՆ

Անգլիայում հեռախոսներին հատուկ հարմարություններ են ամրացվում, որոնք հրդեհի դեպքում ավտոմատ կերպով կանչում են հրդեհաշեջ խմբին։ Ջերմության բարձրացումից ձուլվում են հեռախոսի ապարատին միացած հատուկ լարերը և ապարատն ավտոմատ կերպով կանչում է մոտակա հրդեհաշեջ մասին։

(«Ն.Ն.Ն.» յուրաքանչ.)

ԱՄԽԱՅԻՆ ՓՈՂՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՄՈՏՈՐ

Մոտորների համար առանց կանխավ հեղուկային վառելանյութ պատրաստելու, ածուխն իրրև վառելանյութ ոգտագործելու մասին մինչև առաջին անգամը չեն, որ առաջանում է։ Բայց մինչև այժմ այդ տիպի մոտորի մասսայական ոգտագործմանը խանգարում էր մեքենայի անիվների և գլանների համեմատաբար բարձր մաշումը՝ ածուխով աշխատելուց։ Ներկայումս, ինչպես նշում է գերմանական մամուլը, հաջողվել է վերացնել այդ թերությունը։ Գերմանիայի փոշով աշխատող «Հուգո» մոտորի փորձարկումը ցույց է տվել, որ նա կարող է 10 հազար ժամ աշխատել առանց վերանորոգման։

«Հուգո» մոտորի աշխատանքը հիմնականում համապատասխանում է սովորական քառատակտ մոտորի աշխատանքին։ Նա այնպես է կառուցված, որ անհրաժեշտության դեպքում կարող է արագորեն հեղուկ վառելանյութի անցնել։

«Հուգո» մոտորի շահագործման արժեքը շատ անգամ պակաս է դիզելային մոտորի արժեքից։ Իր կառուցվածքով այդ մոտորն ամենից շատ պիտանի է արտադրության մեջ և գեղջկին նավագնացությունում, բայց ներկայումս Գերմանիայում փորձեր են կատարվում այդ մոտորն ավտոմոբիլային արտադրության համար ոգտագործելու նպատակով։

ԱՄՖԻՐԻԱ ԱՎՏՈՄՈԲԻԼ

Ֆրանսիական գյուտարար Միշել Անդրեն ամֆիբիա-ավտոմոբիլ (ջրացամբային ավտոմոբիլ) է հնարել։ Մեքենան խճուղով կարող է գնալ ժամը 36 կիլոմետր, ջրում 15 կիլոմետր է ջրի տակ՝ 12 կիլոմետր արագությամբ։ Ներկայումս Անդրեի ավտոմոբիլը փորձարկվում է Ֆրանսիայում։ Գրբանդավեդել մեծ լուսուն։

(«Նեռատեսիժաս»)

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ԾԵԾՈՒՄ

Մեծ-Շեն գյուղացի Մովսես Ղուկասյանը կոլտնտեսության աշխատանքներից խուսափում էր։ Նա կոլտնտեսությունը թողնելով ագարակոսի խանութում էր աշխատում։ գնորդների հետ կռվելու պատճառով վտարեցին աշխատանքից։ Ծ. նոթերի և բանկասների միջնորդությամբ նրան հաջողվեց խցկվել թաքթաղեսը և բրիգադավարի պաշտոն ստանձնել։ Մովսեսը թաքթաղեսի բանվորների հետ շատ կոպիտ և վերաբերվում, հայհոյում է։ Նա այդ աշխատանքում յերկար մնալ չէր կարող, բայց վորովհետև նրան հովանավորողներն ու պաշտպանողները շատ-շատ են՝ մնում է իր պաշտոնում։

Մ. Ղուկասյանը կոպտությունները կատարելագործել է։ Վերջերս սկսել է բանվորներին ծեծել։ Նա ատրակով ծեծել է բանվոր Բ. Մարտիրոսյանին։

12 բանվոր կոլեկտիվ դիմում են ներկայացրել, բողոքել են այդ անիրավարելի վարմունքների դեմ, բայց բանվորների դիմումն անհետևանք են թողել։

Ղուկասյանը Մադաղիս, Դաստակերտ և Տանաշեն գյուղերից յեկած բանվորներին շարունակ հալածում է։ Նա սայլապանների կատարած աշխատանքը ճիշտ չի հաշվառում։ 4 խորանարդ մետր քարի հանդեպ դիտավորյալ 2 խորանարդ մետր՝ է հաշվում։ Այդպես է վարվել Մովսեսը Բ. և Գ. Մարտիրոսյանների հետ։ Մովսեսն այդ արարքների համար անպատիժ չիպտի մնա։

ԳԵՈՒՂԹՂԹԱԿԻՑ

ՓՈՍՏԱՏԱՐ ԱՐՇԱԿԸ

Մոխրաթաղի կոլտնտեսության անդամ Արշակ Մարտիրոսյանը 1930 թվից փոստատար է։ Նա լավ է ըմբռնել իր անելիքները և պարտավորություններին կատարում է բարեխղճորեն։

Արշակը գյուղում լավ ազիտատոր է։ Մասսային բացատրում է մամուլի խոշոր նշանակության ու դերի մասին, որի շնորհիվ գյուղացիների մեծագույն մասը բաժանորդագրված է տպագրական թերթերի։

Նա թերթերի հետաքրքիր բովանդակությունն ընթերցում է բացատրում և անդրադառնում գյուղացիներին։

Լավ աշխատանքի համար Արշակը Մարգարերի փոստի բաժանմունքի կողմից յերկու անգամ պարգևատրվել է։

ՍԻՐԱԿԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՏԵՌԸ ՀԱՆՁՆՎԱԾ Է ԱՆՀՈՒՍԱԼԻ ՄԵՐԹՈՒ

Վալոդյա Հայրապետյանը Դահրավ գյուղացի չի։ Նա կոլտնտեսության իրեն չեր ալդարանում՝ հափշտակում էր կոլտնտեսության սեփականությունը։ Կոլտնտեսությունը թողնելով՝ նա անտառապահի պաշտոն է ստանձնել, և գործում է, ինչպես իր շահերն են թելադրում։

Նա անտառները չի պաշտպանում, այլ փչացնում է։

Դահրավ գյուղի բնակիչներ Միշա և Աշոտ Մարգարյանների, Դավիթ Ղարայանի և ուրիշների հետ միացած անտառի արժեքավոր ծառերը կտրում և վաճառում է Աղդամի շուկայում։

Վալոդյա Հայրապետյանին անտառները վստահել չի կարելի։

Խմբագիր՝ ԿԱՄՄԵՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ ՀԱՍՑԵՆ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ՀԵՌԱԽՈՍՆԵՐ ԽՄԲԱԳԻՐ 1—77, ԲԱԺԻՆՆԵՐ 46, ՏՊԱՐԱՆ՝ 1-ԻՆ ԿՈՄՍԱՄՈԼՅՈՒՍԻ 53
ՊԱՏՎԵՐ Ա—115 «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԱՅԻ ՏՊԱՐԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

© National Library of Armenia